ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 Թ. 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ս/թ դեկտեմբերի 28-ին Բաղրամյան գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը նախագահում էր համայնքի ղեկավար Ս.Բենյամինյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝ Ա.Սարգսյանը:
Մասնակցում էին ավագանու անդամներ, գյուղապետարանի աշխատակազմը, համայնքի բնակիչներ և բուժաշխատողներ:
ԼՍԵՑԻՆ՝ Արարատի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավար Ս.Բենյամինյանի հաշվետվությունը 2016թ-ի 2-րդ կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ:
Արձանագրվեց, որ 2016թ-ի 2-րդ կիսամյակի ընթացքում Բաղրամյան գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.
Գյուղապետարանը բնակիչներին տվել է 280 տեղեկանք, ստացել նամակներ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:
2016 թ-ի 2-րդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտներն ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

1. Հողի հարկ -- 4686,9
2. Գույքահարկ -- 3583,8
3. Տեղական տուրք -- 87,5
4. Ոչ հարկային եկամուտ -- 31182,5

ա/ Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ .
- Անկախության օր, Ուսուցչի օր, Ամանորի տոն:
բ/ Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 3500,0 հ.դ. ֆինանսական աջակցություն; հուղարկավորության ծախսեր՝ 450,0
գ/ աղբահանության համար ---- 876,0 հազ.դրամ
Համայնքը խիստ կարիք ունի մանկապարտեզի և կուլտուրայի տան հիմնավերանորոգման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ